ՏԵՂԵԿԱՆՔ
«««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 29. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ~~2024 թվականի հունվարի 1-ից~~ 2023 թվականի հունիսի 15-ից, ինչպես նաև բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ մտնելը, ինչպես նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով (այսուհետ՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած ակտերի դեմ բողոքները ներկայացվում են վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան:

3. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ մտնելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բողոքները ներկայացվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:

4. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքով գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության դեպքում այն նոր քննության է ուղարկում հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:

5. Սույն օրենքի 19-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի 2-րդ կետը և 23-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը նոտարին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործարկմանը հաջորդող օրվանից:

6. Սույն օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման պահից երկու ամիս հետո: